

ԲԱԺԱՆՈՒՄ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 Մուշկարիոյ համար 12 ծր.
 Տարեկան 6 " "
 Վեցամսեայ 8 " "
 Գրքահամարի համար Տարեկան 15 " "
 Վեցամսեայ 8 " "
 Գրքահամարի համար Տարեկան 3 սրյ.
 Վեցամսեայ 1.50 " "
 ԿԱՆՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ
 Երանուգնակ սոյր սուսքին
 ևսին համար 40 սակիով
 իսկ վերջին երեսի համար
 20 սակիով է. երկին
 իսկ անգամներու համար
 0(1) զեղջ կրկայ :
 Երանայի համար ձեռքի 10 սակիով

ՇԱՐՇՈՒՄ

R. P. Kalmegarian, Moechtbaristangese W. 4
 (Austria)

Գալի եւ դրամ դրկի
 Արագրոսիանի հասցիի
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)
 Իրոսիելիս եւ չնի սրեռ
 Արսասահմանի ձեռքի
 (20 ՍԱՆԹԻՄ)
 Պուշկարիոյ համար ձեռքի
 (15 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ԵԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՊՕԵՐՆԵՐԸ

Անգլո-Պոլսեական պատերազմին
 սկիզբէն ի վեր՝ այս էջերուն մէջ
 օրը օրին ծանուցուցան երկու
 ընդդիմամարտ ազգերուն տարած
 յաղթութիւններն ու անոնց կրած
 պարտութիւնները :

Մեծ ու անչափ էր ուրախու-
 թիւնս, երբ պօէրներուն յաղ-
 թանքի լուրերն աւետելու բարե-
 բախտութիւնը ունեցայ ընթեր-
 ցողներուն, իսկ ընդհակառակը
 համակուած էի միշտ տրտմաթա-
 խիծ վիշտով մը, երբ, իբր աշ-
 խատակից, ստիպուած էի, ճըշ-
 մարտութիւնը առտնց սքողելու,
 անոնց կրած պարտութիւններն
 ալ գրի առնել :

Գիտեմ, հասարակաց թիւնը միշտ
 նորութեան հետամուտ է : Պատե-
 րազմին սկիզբները հեւ ի հեւ կը
 հետեւէր անիկա պօէրական լու-
 րերուն, սակայն վերջ ի վերջոյ
 սովորական բան մը դարձան ա-
 ստնք :

Օսկայն նորութիւն մըն է որ
 պիտի հազորդեմ վերստին այս
 անգամ : Ետտեբու համար թերեւս
 վերջացած նկատուի պօէրական
 պատերազմը. բայց երոպական
 լրագիրները, նոյնիսկ անգլիա-
 կանները կը բերեն մեզի վերստին
 պօէրներուն տարած նորանոր
 յաղթութիւններու սրտապնդող
 լուրեր :

Եսթաթ օրուան թիւին արտա-
 քին լուրերու բաժնին մէջ ըսուե-
 ցաւ թէ՛ պօէրները Գոյսպէրկի
 մօտ յաղթութիւն մը տարած են
 անգլիացիներուն վրայն անոնցմէ
 յափշտակած 500 ձի : Այս լուրը
 մեծ իրարանցում յառաջ բերած
 է Ալպիոնի զաւկներուն մէջ, չէ՛
 թէ ձիերուն կորուստին համար,
 որուն գարմանումը շատ հեշտին
 ըլլայ թերեւս, անգլիական ոս-
 կիներուն շնորհիւ, այլ սրովհե-
 տեւ այդ ձիերուն իւրաքանչիւրը
 կը նշանակէ հեծեալ պօէր մը,
 միշտ կռուելու պատրաստ :
 Անյողողող կամքով, սուկուն
 նկարագրով սմտուած են իսկա
 պէս այդ լեռնականները :
 Արարատ աշխարհի առջեւ յայ-

տարարեցին թէ՛ մինչեւ մեր
 արեան վերջին կաթիլը առաջ
 պիտի տանինք պատերազմը :
 Ահա՛ այսօր տուններնին տեղեր-
 նին քանդուած, ազարակները
 կրակի տրուած, մշակելի հողերը
 բոլորովին խոպան դարձած, հա-
 զարաւոր ընտանիքներ մերկ,
 անթի ու անպատասպարան մնա-
 ցած, սակայն վհատուծի և լքման
 նշոյլն իսկ չբերել անոնց քով,
 և պատրաստ են շարունակել
 կռիւը անընդհատ :

Մեծութեան ծիւ մը կայ այդ
 երբեմնի անտեսուած ժողովուր-
 դին մէջ, քանի որ գիտէ պահել
 ու յարգել իր խոստումը և իր
 բոլոր ուժովը պլլուած կը մնայ
 անկախութեան փայփայելի գա-
 ղափարին :

Այս ծիւրը ուզեցին և կուզեն
 տակաւին բոլորովին արմատաքի
 խլել անամթաբար երկու ան-
 հատներ. վարը, հարաւային
 Ափրիկէի մէջ Միլնէր, երէկի
 օրսգրողը, և վերը՝ Անգլիոյ
 մէջ Չէմպլըրէն, գերազանցօրէն
 շահամուլ փառասէր մը :

Զարմանալի է որ անգլիական
 ժողովուրդը զո՛հ եղաւ յաւիտե-
 նականօրէն ինկած այդ երկու
 անձնաւորութեանց «միսքին» մե-
 մեքնայութեանց : Ու հիմա իր
 արժանապատուութիւնը պահելու
 միակ փափաքով թերեւս գործա-
 կիցն ըլլայ ռիկ մնջիկ վարը գոր-
 ծածուած քստմնելի եղեռնագոր-
 ծութեանց ու անլուր աւարա-
 ութիւններուն :

Չէմպլըրէն, Եսթաթի մը իսկա-
 կան թիւրը, իր կեղտոտութիւն-
 ները պարտկելու և իր սխալ
 քայլը արգարացնելու համար
 սահմուկած կը մնայ հիմա Միլ-
 նէրի ետին, որ, այսօր հասած
 Լոնտոն ու լորտութեան աստի-
 ճանին բարձրացած, կը շարու-
 նակէ վերստին իր ստախօ-
 սութիւնները, թէ՛ պատերազմը
 քիչ ատենէն վերջ պիտի գտնէ
 անպատճառ և թէ՛ Անգլիա շատ
 չուտ պիտի կարողանայ դարմա-
 նել իր ըրած նիւթական կու-
 րուստները : Օսկայն անգլի լօրտ
 Բիշնէր կը վկայէ որ դեռ պա-
 տերազմը վերջացած չէ և մօտ

ժամանակներս ալ վերջանալիք
 չունի :

Կը խաղցուի ծայրայեղօրէն
 սյլանդակ մնջկատակ մը, որուն
 վարագոյրին չուանները պինդ
 բռնած է Անգլիոյ War officeը :

Երոպական միւս տէրութիւն-
 ները չուզեցին և ինչպէս դէպ-
 քերը ցոյց տուին, պիտի չուզեն
 բնաւ միջամտութիւն մը ընել
 այս անհասարկ կռուին վերջ
 մը տալու համար, վասնզի պա-
 տերազմին շարունակութիւնը Ալ-
 պիոնի տկարացումը կենթադրէ :

Դիւանագիտական աշխարհին
 համար վաղուց կարծես գոյու-
 թիւն ունենալէ դադրած են
 խիղճ ու մարդասիրութիւն բա-
 ուերը : Երոպական միւս ազգե-
 րու կռաւարութիւնները դիւա-
 յին հրճուանքով հանգիստես
 կըլլան վարը թափուած արեան
 նախճիրներուն :

Մաղթելի է որ Անգլիա նշմա-
 րելով յստակօրէն ապագայ մեծ
 ու անդարմանելի կորուստը, մէկ
 կողմ նետէ այդ երկու հրէջ մար-
 դերը, և հետեւի Կլատսթոնի
 վեհանձն ու մարդասիրական
 լայն ոգիին, որով կարելի ըլլայ
 կնքել երկու կողմին համար
 պատուաւոր խաղաղութիւն մը,
 որուն վաղ ընդ փոյթ իրակա-
 նացման բոլոր սրտէ փափաքող
 է մարդկութեան ազատամիտ և
 արդարախոհ դասակարգը :

Տեսնենք :

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՏՈՒՐԲԸ ԵՒ
 ՀԱՅՈՑ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ
 ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՄԷՋ

Ամէնքս, առանց բացառու-
 թեան, շարունակ կը կրկնենք
 թէ Պուլկարիոյ ժողովուրդը ա-
 զատ կեանք կը վարէ, թէ տե-
 զական օրէնքները երբէք խրո-
 րուիւն չեն դնէր սղոգերու և
 ցեղերու միջեւ, թէ ամէն մարդ
 կատարեցապէս հաւասար է օ-
 րէնքներու առջեւ, ըլլայ պուլ-
 կար կամ հայ, կամ թիւրք, և
 հետեւաբար ամէն մարդ ինք-

Ստիպողաբար կը խընդ-
 արենք մեր բաժանորդներէն, որ-
 պէս զի բարեհաճին իրենց ներ-
 կայ տարուան բաժնեգրիները
 խմբագրութեանս ուղարկել :
 Այս առթիւ կը յիշեցնենք
 նաեւ անոնց որոնց մասնաւոր
 նամակներ զրկած էինք նախորդ
 շրջանին բաժնեգրիները պա-
 հանջելով, թէ այլ եւս առանց
 ու է նկատողութեան պիտի հրա-
 տարակներ իրենց անունները և
 հասցէները իբրեւ անբարեխիղճ
 խաբեքներու :

ԱՅՏՈՒՅՐՈՒԹԻՒՆ

Բացուած է բաժանորդագրու-
 թիւն գնդարուեստական այբօմի,
 յանուն հոշակաւոր նկարիչ պրօ-
 ֆէսօր Յ. Ալվաղովսկու յիշա-
 րակին :

Ալբոմը բաղկացած կը լինի
 զուտ նկարչական և երաժշտա-
 կան բաժանմունքներէ, երաժշ-
 տական մասում ի միջի այլոց զե-
 տեղուած կը լինին զուտ հայ-
 կական ժողովրդական երգեր ու
 պարերգներ, իսկ նկարչականը —
 փոքրադիր քարտիչներէ, էս-
 քիչներէ, էտիւզներէ, վե-
 նետկաններէ և այլն. — գու-
 եւաւոր, ֆոտոտպ և ցինկոգրա-
 ֆով : Մասնակցում են Ս. Պետեր-
 բուրգի գեղարուեստից ճեմարա-
 նի բոլոր յայտնի պրօֆէսօրները
 նոյնպէս և շատ յայտնի երիտա-
 արդ նկարիչներ ու զոմբողի-
 տորներ :

Բաժանորդագրութիւնն է ար-
 ատասմանի համար իր ճանա-
 պարհածախտով 8 ֆր. իսկ տպա-
 թիւթիւնից յետոյ 10 1/2 ֆր.
 Եւս ալբօմը փառայեղ կազմով
 2 1/2 ֆր. վերագիր :

Բաժանորդ գրուիլ ցանկացող-
 ները կարող են գրիմել հետեւե-
 ալ հասցէով՝

Ս. Իթթերուպուրկ կայսերական
 գեղարուեստից ճեմարան,
 Դ ՕՔՐՈՅԵԱՆ
 Խմբագիր հրատարակիչներ
 Ե. Բաղդասարեանց
 Դ. Օֆրոյեանց

զինքը ազատ կը զգոյ իր բոլոր իրաւունքները պաշտպանելու երբ ու է պատճառաւ անոնք ոտնակոխ ըլլան :

Երբ խնդիրը մեր պարտականութիւնները կատարելու մասին ըլլայ, մենք ուրիշ ազգերու հետ լիովին կը կատարենք զանոնք, և ստիպուած ալ ենք կատարելու : Բայց ցաւալին այն է որ շատ անգամ անգիտակցաբար, կամ մեր սեղանական օրէնքներու անձանթութեան հետեւանքով, կը կորսնցնենք և չենք կրնար պէտք եղածին պէս օգտուիլ այդ օրէնքներէն : Խօսքս մասնաւորապէս Պուլկարիոյ հայոց վարժարաններուն հոգաբարձութեանց վրայ է : Ամէն մարդ գիտէ թէ կառավարական տուրքերու հետ միատեղ դպրոցական տուրք մըն ալ կայ, որ ամէն մարդ կը վճարէ առանց հարցնելու թէ ո՞ր դրոշմը ցնցեալն համար են այդ տուրքը Գրամները :

Այդ գրամները անշուշտ կը յատկացուին պուլկարաց նախակրթարաններուն, որոնց մէջ ուսումը ձրի և ստիպողական է բոլոր պուլկարահպատակներու համար : Բայց տեսնենք թէ որքան հայ տղաներ կը յաճախեն այդ վարժարանները :

Քանի մը հազուադէպ բացառութիւնները չի հաշուելով, գրեթէ բոլոր հայ տղաները, Պուլկարիոյ մէջ, ազգային վարժարաններ կը յաճախեն, որովհետեւ ուր որ քիչ շատ ստուարաթիւ հայ գաղութ մը կայ, հոն կայ նաեւ հայկական վարժարան մը () : Պուլկար վարժարան յա-

() Չենք հաշուեր այն մասնաւոր վարժարանները որոնք իրենց քիւ-

ճախող հայոց թիւը խիստ սահմանափակ է բարեբախտաբար : Աւերմն, մեր զաւակները չեն կրնար օգտուիլ մեր վճարած գրամներէն, և ապէս զատ, խեղճ հայերը ստիպուած կըլլան մէկ կողմէ դպրոցական տուրք վճարելու, միւս կողմէ ալ, զատ դպրոցական թոշակ մը՝ հայ վարժարաններուն համար, որպէս զի իրենց զաւակները թէ՛ իբրեւ հայ անհրաժեշտ մայրենի լեզուն սորվին և թէ՛ իւրացնեն նաեւ սուրբայ կեանքի մէջ հարկ եղած տարրական գիտութիւնները :

Ո՞վ է այս անպատեհութեան պատասխանատուն, Գրամները գանձողը թէ վճարողը, այսինքն կառավարութիւնը թէ հայ ժողովուրդը :

Ասոնցմէ ոչ ոք մեղաւոր չէ, որովհետեւ կառավարութիւնը ամէն տարի իր տարեկան պիտանքէն մէջ այս պարագան կը նախատեսէ, և յատուկ բարակրթի մը նշանակած է մասնաւոր վարժարաններու օգնելու համար : Ամէն ոչ-պուլկար վարժարաններու համար, կառավարութիւնը տարեկան որոշ նպաստներ յատկացուցած է : Եւ այդ նպաստները կը տրուին, բայց որո՞ւ տաճկաց վարժարաններուն, օրինակի համար : Ամէն տարի, այդ բարակրթին համաձայն,

մէթրական ծրագրերով կուզեն մինչև կրօնագիտութեան բարձրաստի ոչ թէ ապագայ սերունդին կարեւոր գիտելիքներ հաղորդելու համար, այլ լոկ հիմնադիր տնօրէններու ապրուստը չքեղցնելու եւ ազգ. վարժարաններու յստակութեան արգելք ըլլալու համար, զիւրահաւատ ժողովրդին միամտութիւնը շահագործելով :

պուլկար կառավարութիւնը հազարներով ֆրանք կուտայ տաճիկ վարժարաններուն :

Միթէ նոյն կառավարութիւնը ուրիշ վարժարաններու չի՞ տար կամ չի՞ փոփոխել տալու նոյն նպաստը : Ընդհակառակը, որովհետեւ ինք բարոյապէս պարտաւոր է տալու, և նոյնիսկ անցեալները պուլկար մամուլին մէջ խնդրոյ կարեւոր նիւթ եղած էր թէ ինչո՞ւ միայն տաճիկ վարժարանները կը նպաստաւորուին կառավարութեան այդ նպաստէն, իսկ ոչ-պուլկար քրիստոնեայ վարժարանները, որոնք նոյնքան և թերեւս աւելի պէտք ունին, անմասն կը մնան : Եւ ատոր համար պատճառ կը նկատուէր թուրքերուն Սօպրանիէի մէջ երեսփոխաններ ունենալը :

Մենք ալ մեր թաղապետական անդամները ունինք իւրաքանչիւր քաղաքին մէջ որոնք կրնան ի հարկին յիշեցնել կառավարութեան այդ նպաստի խնդիրը : Բայց ո՞վ է ուզողը, ո՞վ է իր իրաւունքին պաշտպան կեցողը : Պէտք է համոզուինք թէ, քանի որ պարտաւոր ենք այդ տուրքը վճարել, իրաւունք ունինք անոր փոխարէն նպաստ պահանջելու : Երբ երկրի մը մէջ կատարեալ հատաստութիւն կը տիրէ տուրքերու վճարման մասին, ինչո՞ւ նոյն հաւատարութիւնը չի տիրէ իրաւունքին պանանջելու մէջ : Բայց ո՞վ է յանցաւորը, զարձեւ Մենք՝ անպայման :

Պէտք է խոստովանիլ որ մեծ սխալ մը պիտի ըլլար այդ անհոգութեան ուղղակի ժողովուրդը պատասխանատու ճանչնալ, որովհետեւ դպրոցական պէտքերը հոգալու համար անիկա պաշտո-

նական մարմին մը ընտրած էր որուն յանձնած է դպրոցական բոլոր գործերը և որ պատասխանատու է անոնց անկանոնութեան : Այդ մարմինն է անպայտաւոր իրապէս պատասխանատուն :

Ինչ որ ալ ըլլայ միշտ ցաւալու է մտածել որ երկրի մը օրէնքները մեղի լայն իրաւունքներով կուտան ու մենք չենք կրնար մէկ կերպով անոնցմէ օգտուիլ :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՒՐԻՆԵՆ, 20 Մայիս

Այս շաբթու ձեր պատ. թերթի թիւ 316րդ թիւին մէջ, Պուլկարի շէնքը զրկուած թղթակցութիւնը մը այն համոզումը գոյացնելու տուաւ ինձ թէ՛ մեր հայկական օրաթերթերը անգիտակցաբար տեսակ մը գործիք եղած են աշխարհի սորանոր անձնական հակառակու լուծիւններուն վրէժխնդրութեան : Պէտք է խոստովանիլ թէ շատ ցաւալի պարագայ մըն է ասիկայ, սակայն բարեբաղչաբար մեր թերթերուն անկողմնաւոր կալուածի կը յայտնուի միւսը, կողմանէ հրատարակուած հերթաբերութեան :

Շատ չի պիտի զարմանայի եմալ ալ կարողալով Պ. Շահմիրի թղթակցութեան, եթէ նախապէստէ գրած չըլլայի թէ՛ Պուլկարի թերթերը արանին բացումը մասնաւորապէս որոնց կը պարտինք : Երկու տարի առաջ, կը գրէ ձեր Պ. թղթակցը մէկ երկու թերտասարդներ ընթերցարան մը հիմնելու « փափաքը » ունենցելու են : Փափաքը սակայն արդիւնք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
Ի. ՎԱԶՈՎ
ՈՉ ԿՐԻՂՃԱՆ ՈՉ ԿՐ ՍԻՒՆԵՆ
II
(Շար. Ասխուրյ քիւիկ)

Բայց մումանիոյ բոլոր բանտերը աս քաղերով լեցուած էին : Պալքանի արժեւները վանդակի մէջ կը կենային, հերոսները՝ հիմա հաւի գողեր եղած էին : Նոր ու սոված բրօշթարի մը, կազմուած սիրագործութիւններէ, ցնցոտիներէ ու փառքէ : Այո՛, որովհետեւ այդ ազտոտ ցնցոտիները, որոնք այդ թշուառներու թիկունքէն կախուած էին, ատոնց փառքն էին, եւ ամենարարձր փառքը որովհետեւ արհամարանքէն ցեխտուած էր եւ չէր ճանչցուած : Յաճախ Դանուբի եզերքը կը թափային եւ Պուլկարիոյ կանանց լեռնազագաթները կը գիտէին : Ահա, հոն էր անիկա եւ կը ժպտար, կը կանչէր, կը խօ-

սէր իրենց եւ հայրենիքի երկինքը, լքեալ օճախները կը ցուցնէր իրենց դառն յիշատակներովն ու ցնորքներովը . . . Դանուբը, պերճօրէն ու մեղմարար հայրենիքին ու իրենց մէջտեղը կը կապուտնար : Դայլ մը միայն, ու հոն էին, ճիշ մը միայն — ու պիտի լսէր ան : Որչափ մօտ եւ որչափ հեռու էր : Օհ, Պուլկարիա՛, երբէք ատչափ պաշտելի չես եղած, երբ, քենէ դուրս ենք, երբէք ատչափ անհրաժեշտ չես եղած, երբ անյոյս կերպով քեզ կորսնցուցած ենք . . . !

Պրըջով ալ կը քնանար : Մտքին մէջ զանազան տարօրինակ եւ ցնորական ու անաւոր նկարներ կալեկոծուէին :

Հրոսախմբերու արշաւանքները, « խրագործութիւններու նկարագրութիւնը, հիմակ իրեն առջեւ, ձեւ ու մարմին կառնէին : Ան Սթրանձային կը նայէր, որ Պալքանէն դրօշը բարձրացուցած կը կանչէր : « Չարկէ՛ք տղաքները » : Երբեմն Սրիբօ Մաքէտօնսքիին, որ թուրքի մարագ մը այրելով, իր սրով երկուքի կը բաժնէ հանրմ մը եւ թուրք մը : Իսկ Պալքանը կը զողզոյայ, անտառները կը գոռան, քամին կը փչէ, ու կողնի-

ներու ետեւէն հրացանները կը պայթին : Հոն . . . առեւծի զինանշան ունեցող զլխարկով մէկը, ծառին ետեւէն երեւցաւ ու կծկուեցաւ : Հրացանի պայթիւն մը կը լսուի, յետոյ ուրիշ պայթիւն մը, ուրիշ պայթիւն մըն ալ, շատ մը հրացանի որոտներ եւ ամբողջ կաղնիի անտառը կը սկսի զնգալ : Հիմա սիրտը կը տրոփէ, եւ պայթելու շափ կը տրոփէ ! : Ահա հաճի Տիմիթը . . . ճիշդ այնպէ՛ ինչպէս որ պատկերներու մէջ նկարուած է : Չեւքը թուր մը լսուած, խուժրին առջեւէն կը վազէ : Ուր որ վազէ, միշտ սոսկալի է եւ գեղեցիկ ! : Յանկարծ պայթիւն մը կը լսուի . . . Ան կիլիմայ . . . եւ արեան ճապաղիքի մը մէջ կը շաղախուի . . . Յետոյ ծուխ ու ամպեր, եւ ամբողջ հրոսակախուժեր ոգիներ դարձած՝ երկինքի վրայ կը թռչին ու կանհետանան . . . Երբ որ առաւօտուն արթնցաւ, քանի մը րոպէ ուզամ լոր մնաց, մինչև որ ընտանեցաւ, Հասկցաւ որ Պալքանը չէր : Տախտակի վրայ դեռ երկու հոգի կը քնանային : Սթրանձան կանուխ վեր ելած էր, եւ նկուզի դուռը բացած աւրած եւ սրճամանը կրակը խոթած էր : — Բէ՛լօվլէրն ալ պատէն չէր կախուած : Մաքէտօնսքին գի-

նետան մէջ խոշոր քայլերով կը շքրջագայէր ու կը ծխէր Ան ձեր գրօշակագետի փոխառութեամբը երկու օրի տնկած էր :

— Պրըջով, մօտեանալով ըստ ելիք, երթանք Լամպրէի մօտ քաֆէն մը խմենք, Բայց այս ֆէսը նետելու հա, կամ աւելի լաւը Սթրանձանի նուիրէ :

Պրըջով վեր ելլելով, փութով լուացուեցաւ, շտկուեցաւ ու նկուզէն դուրս ելաւ եւ իր ֆէսի փոխարէն, հին ու գործածուած շապկա մը առաւ, զոր Սթրանձան պահաւանէ մը հանած էր : Փողոց ելան ֆրանուր կառքերն ու ֆայթօնները կայան մէջէն, եւ սաւառեան թաղամթի անցորդները կերթեւեկէին : Ընդարձակ ծուխով ու մարդով լեցուն սրբճարան մը մտան :

Առջի անգամէն իրենց նայուածքին զարկաւ, պատերէն կախուած երթանի պատկերներ որոնք յունական ապստամբութեան ամենակարեւոր ընդհարումներն ու զէպքերը եւ պուլկար հրոսախմբերու սիրահար գործութիւնները կը ներկայացնէին : Բայց ամենայնպէս տեղը յոյն թաւա գաւորի ու թագուհու լուսանկարներուն եւ Բաքովսքիի պատկերի

նշանակեր. Գաղափարը իրա-
նականորեն համար, ժողովրդին
համար լինելու վայելած ըլլա-
նունք է, որմէ զուրկ մնացած են
հայրենիքը և հայրենասիրտները:
Մինչդեռ Պ. Խաչիկ Մանուկ-
եան որուն անունը խեղաթիւր-
ւալուած է Ի. Իւզովիչեան անունով
էնքով կրտսած է Պ. Շահմիրի կող-
մէն, — պարագայ մը որ յատկա-
րապարհաբար մըն է յիշեալին ան-
ձնական հակառակութեան — ձեռ-
նարկները ունեցած է Պ.
Գեորգ Վասպուրականցիի, «յայտ-
նի» անձնուէր վանեցիին հետ,
բան գործ մէկգի թողլով, ժո-
ղովրդին ամէն խաւերուն մէջ
պատելու, համոզելու, ընթեր-
ցանութեան սէրը արծարծելու,
համարաբար և բաժնեվճար հաւաքե-
լու ու ընթերցարանը հիմնելու
գնդակապարը լիովին յաջողցնելու
և կանգնելու իր գրգռանքն ամբողջա-
պես ցուցած, ընթերցարանի համար
ստանուն մը վարձած, արտօնագիրը
ընտանացած, կարասիներ հայթայ-
թելով, թերթերու բաժնեգրիները
մղմուշարած, եւայլն ըլլալուն հա-
մար անշուշտ «իւզովի» — աներես
անունով կը շնորհաւորուի, և
միտք. Գեորգ ալ որ այս յոգնու-
հերթիւններուն մէջ անբաժան ե-
ղած է Պ. Մանուկեանէն, առժա-
մամբար ընթերցարանի հսկողու-
թեան հոգը անձնուիրաբար
ստանալով ըլլալուն փոխարէն
ընդհանուր մտքով, մակերիւրով կը
վարձատրուի:
Չարմանալի չէ՞ հիմա որ Պ.
Շահմիրի չեմ գիտեր ինչ տեսակ
կողմնորոշմանով մը գրողուած, իր
անեցած անձնական հակառա-
կութեան վրէժը առնելու համար
առիթով չի փախցնէր իր քմահա-

նոյքին ուղածին պէս թունաւո-
րելու այդ անձերուն արժանա-
պատուութիւնը որուն գործիք կը-
նէ ձեր պատ. թերթը, օգտուե-
լով անշուշտ ձեր անգրասկցու-
թեանէն:
Կը փութամ ուրեմն ներկայիս
խնդրել որ «Շարժում»-ի յառա-
ջիկայ թերթէն մէկուն մէջ,
անկողմնակալութեան և ճշմար-
տութեան համար, հաճիք ճըշ-
գել սոյն կէտերը և կը հաւաս-
տեմ ձեզ որ Պ. Խաչիկ Մանուկ-
եան և Պ. Գեորգ Վասպուրականցի
լիովին կը վայելեն տեղւոյս դաղ-
թականութեան համակրութիւնը
և մանաւանդ վստահութիւնը...
Քանի որ առանց ատոր կարելի
չէր արդէն իրագործել ընթեր-
ցարան մը հիմնելու գաղափարը:
Այս կէտը փորձով գիտնալու են
Պ. Շահմիրի և իր մէկ երկու խոր-
հրդակիցները:
Քարտուղար առժամեայ վարչ.
Պուրջէի Հայ. ընթերցարանին
ԱՐԻՍ ԱՍՏՍՐ

ԱՐԺԱՆԻ ՊԱՏԻԺ

Սպաղանքի կոտորածն եւ Սե-
րորի սպանման կսկծագին լուրերէն
ետքը, «Իրօջակ»-ի ներկայ թիւը
վրէժխնդրութեան գոհացումին եւ
վստուխեան արժանաւորապէս պատ-
ժուելուն աւետար կը հաղորդէ մեզի:
Բարբարոս քիւրա մը քանի մը
վախկոտ, ցածհոգի հայերու օժան-
դակութեամբ, կը յաջողէր սպաննելու
այն քաջ որ տարիներով սարսփ-
ձգած էր Տարօնի բնակիչներուն,
թուրք կոտորածներուն ու քիւր-
տերու վրայ, եւ պահպան հրեշտակը
եղած էր անպաշտպան, խեղճ ու
ստրուկ հայերուն՝ անոնց կենդանի
օրինակը տալով կոտորելու և ինքնա-
պաշտպանութեան:
Յեղափոխութիւնը Սերորի սպան-

— Բայց դու գրամները սեղանի
վրայ չես դրած... տասնըմէկ Ֆր
առնելիքս եղաւ ըսաւ Պրըջըով Մա-
քետոնսքիին:
— Պատրաստ են, պէ ախպար,
փառք Աստուծոյ պատուաւոր մարդ
ենք, պատասխանեց Մաքետոնսքիին,
թղթերը խառնելով:
Յանկարծ խաղը ուրիշ ուղղու-
թիւն մը առաւ: Մաքետոնսքիին
բաղդը բանել սկսաւ, Պրըջըով կը
մոռեգնէր Մաքետոնսքիին ալ կը զար-
մանար, թուղթերուն ատշափ լու-
զալուն: Շուտով իր պարտքը մաք-
րեց և սկսաւ շահիլ:
Պրըջըով կը շարունակէր խաղալ
և քրտնիլ սկսաւ, որովհետեւ իր
երկու նարթեօնը թոած էր, Բոլորը
հինգ ֆրանք մնացած էր, ատոնք
ալ մէկէն տուաւ: Մաքետոնսքիին ա-
տոնք ալ վստակեցաւ, Պրըջըով ասանց
սանթիմի մնաց Մաքետոնսքիին պա-
տի ժամացոյցին նայելով ըսաւ, «գէ-
թալը տասնըմէկ է, ճաշեմք»:
— Հապա Էս, բան մը չունիմ հի-
մա, ըսաւ (ապշած) Պրըջըովը:
— Մի վախնար, քեզ պիտի հիւ-
րասիրեմ, ի՛նչ որ իմ է, քուկդ է,
Հոս Թուամանիոյ մէջ գործերն այսպէս
կերթան: Քեզ երեսի վրայ չը պիտի

նութիւնով ոչ միայն հազուագիւտ
հերոս մը կը կորսնցնէր, այլ նաեւ
տեղի կուտար հայ ժողովրդին լքու-
մին ու յուսահատութեան, եւ թըշ-
նամի ցեղերուն հրճուանքին ու քս-
ջաւերութեան: Պէտք էր իսկոյն ա-
նոր վրէժը լուծել և խստիւ պատ-
ժել քաջին աշխարհը մտնող մէկ քա-
նի աղտոտ ու վատհոգի գաւառն-
ները՝ որոնք թերեւս իրենց յաջորդ-
ները պիտի ունենային, եթէ Սերորի
մասնութիւնը անպատիժ մնար:
Ու ահա այդ պատիժը յաջողու-
թեամբ գործադրուած է: Սերորի ըն-
կեր ու գաղափարակից ուրիշ քաջա-
սիրտ հայեր, Տարօնի հայութեան
կատաղի վրէժը իրենց մէջ մարմա-
ցուցած՝ յետապնդեր են սպաննիչ-
ները եւ ամէնքն ալ միտմի սատ-
կեցուցեր են: Ժողովուրդը որ Սե-
րորի մահէն ետքը թերեւս թուլցած
էր վայրկեան մը, հիմա նորէն սիրտ
կանգնէ, կողբուողի, երբ տեսնէ
որ անոր յաջորդները կան ու կը
մնան իր ծոցին մէջ կենդանի, ու-
րոնք գիտեն վրէժ լուծել ու պատ-
ժել գաւառները: Այսպէս ալ կը
հաստատէ Մուշի նամակը զոր
Դրօշակի մէջ կը կարգանք:

Սերորի սպանման ատեն կարգ մը
անորակելի հայեր ալ գտնուեցան,
որոնք փորձեցին արգարացնել մատ-
նիչները եւ ժողովրդին դժգոհու-
թեան վերադրել այդ սպանութիւնը:
Այս անամբ յայտարարութիւնը որ
կը բղխէր նոյնիսկ յեղափոխական
կոչուող կարգ մը արարածներէ, ան-
ջնջելի արատ մը պիտի մնար Տարօնի
հայերուն, եթէ անոնք գիտեցած չըլ-
լային իրենց ձեռքով իրենց վրէժը
լուծել: Ու հիմա, որքան զանազա-
նութիւն կայ այս անտաշ, բնական,
հաւատքով ու զարգացումով լեցուած
կտրիճներուն եւ քաղաքակիրթ աշ-
խարհի կեդրոններուն մէջ վայրա-
հալօրէն որոտացող խաբբայ յեղա-
փոխականներու միջեւ, որոնք Սերորի
մը մահով այնքան կը հրճուին որ-
քան չի պիտի ուրախանային թերեւս

Թողունք, Հոս, օտար հող է:
Աս մարդը տարօրինակ ազդեցու-
թիւն մը կը բանեցնէր Պրըջըովի
վրայ: Այդ համոզիչ, հեղինակ ու նեն-
գաւոր նայուածքը, կեանքի անհոգ
արտասոյտութեան միացած՝ ապշե-
ցուց Պրըջըովը, եւ նա մեքենայա-
բար Մաքետոնսքիին ու Հաճիին ե-
տե՛ն գնաց:

III

Դրօշակապետի գիւնտունը վերա-
դարձան:
Սթրանձան ճաշը պատրաստած էր
արդէն իր սովորական այցելու—հայ-
դուկներուն: Կրակէն նոր վար առ-
նուած լուրիայի կաթսան տաք
տաք շոգի կարճակէր: Միայն հիւ-
րերուն կը սպասէին: Շուտով սկսան
զալ մէկ մէկ կամ զոյգ զոյգ եւ գի-
նետան մէջտեղի երկար սեղանին
չուրջը բոլորուեցան անօթի մար-
դիկը, որոնք զգալները ձեռքերին
անհամբեր կը սպասէին Սթրանձանին
որ իրենց պնակները լեցունէ: Հոն
էին նաեւ մեր երկի գիւնտուն քո-
լոր ծանօթները: Շուտով ալովալի
ճաշը սկսաւ, շրթունքները կը լափ-
լափէին, ըրանները կը ծամծամէին,

եթէ կարմիր Գաղանին մահուան
լուրը առած ըլլային, որոնք ան-
պատկառօրէն ժողովուրդը ուզեցին
անբարոյականացնել ու լքանել, ա-
նարգելով իր ամենէն փափուկ զգա-
ցումները եւ ամենէն սիրելի անուն-
ները, եւ ծափ զարնելով յեղափոխու-
թեան մը դէմ կատարուած ու եւ է
գաւառանութեան մը ի լուր:
Թո՛ղ խպին հիմա այդ մարդիկը
իրենց գրածները կարդալով, եթէ
երես ունին խպնելու, Իրենց թու-
նաւոր գրուածները բարբարոսաբար
ոչ մէկ ներգործութիւն չեն ունեցած
ազնիւ սրտերուն վրայ: որոնք կըր-
նան իրենց ներկայացուած կեղծ,
խաբեպատիժ ու խայտառակ խրատ-
ներն ու յորդորները արհամարհել եւ
իրենց ճամբան շարունակել անվատ:
Իրաւ է թէ այդ հաջողներուն մէջ շատ
անգամ անանկ շոշորներ կան, ու-
րոնք վաղը մեղայի պիտի գան նո-
րէն, երբ Սերորի պատկերն ալ
թերթին մէջ հանդիպին:

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Մալկարայի հայոց եկեղեցիին
մէջ մայիս 9-ին շորեքշարթի գի-
շեր հրդեհ ծագելով եկեղեցիին
մէկ փոքր մասը միայն հրոյ ճարակ
եղեր է, շնորհիւ անմիջապէս հա-
սած օգնութեանց: Հրդեհը յա-
ռաջ եկեր է վառած մոմերու
բաղմոցներուն վրայ լինալէն:
— Եղեսիոյ առաջնորդական
տեղապահ Անանիա վարդապետ
գիր մը մատուցանելով տեղւոյն
կառավարիչ էմին պէյի, խնդ-
րեր է որ հարկ եղած օրինական
ձեւակերպութիւնները կատար-
ուին՝ հայ եկեղեցի մը շինելու
համար Հռոմկլայի մէջ: Կառա-
վարիչը խոստացեր է օրինական
գործողութիւնները փութացնել և
քիչ օրէն եկեղեցւոյն շինութեան

կողմը կուլ կուտային: Խօսակ-
ցութիւնները կենդանացան, բազմա-
տեսակ եղած էին: Կը խօսէին քաղա-
քականութեան վրայ, հարուստ վա-
ճառականի մը գիշերուան քասախ
կոտորելուն վրայ, (ազգային վաշ-
խառուներու) «ազգակերներու» վրայ,
Մալիկին նոր հասած հարուստ թուր-
քի մը վրայ որ պէտք էր մէջտեղէն
վերնար, Պուլկարիայի գաշտերու անց-
եալ տարուան կոխներուն վրայ եւ
չօրպածիներու ընչաքաղցութեան
վրայ... Ամէնքն ալ, Պրըջըովէն
զատ, այս կարեւոր խօսակցութեան
եռանդով կը մասնակցէին: Երբ որ
Սթրանձանի թթու ու աժան գինիէն
քանի մը զաւաթ կոնծեցին, աչքերը
սկսան փայլել և խօսքերը բոցա-
վառեցան (бурно): Հայհայնքներն
ու սպանալիքները սկսան սուկ
սուկ կրկնուիլ: Կը գոռային յայտնի
հարուստ պուլկարի մը դէմ, գիրար
կընդհատէին ու կը բորբոքէին:

Թարգմ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ

(Շարունակելի)

արտոնագիրը յանձնել: Ինչպէս յայտնի է այդ գիւղին մէջ կը գտնուի Շնորհալիին զերեզմանը:

— Ուսումնական խորհուրդը մասնաւոր յանձնախումբ մը կազմեց է ուսումնասիրելու համար Իւնօն, Սթար և Ռօսիա ապահովագրական ընկերութեանց ներկայացուցած տեղեկագիրները ուսուցիչներու Օգնութեան սընտուկին մասին: Յանձնախումբը կը բաղկանայ երեք անդամներէ. Յակոբ Էստեան Վահան Էստեան և Սմբատ Գեաթիպեան: Ուսումնական խորհուրդը հարկ եղած անմիջական պէտքերու ու տեղեկութեանց հաղորդման համար իր կողմէ ներկայացուցիչ կարգեր է Հրանտ Ասատուրը:

— «Հայրենիք» կը հաղորդէ թէ՛ Նշան Ֆէսճեան անուն երկտասարդ մը որ Նիւ-Եօրքի մէջ գորգի վաճառական Ալէօնի քով կաշխատէր, 1300 տոլարի շէք մը իւրացնելով փախեր է, բայց Խարբերդի մէջ ձերբակալուելով բանտ դրուեց է:

Ֆէսճեան Բաղդէն 300 տոլար իր հօրը կը շրկէ և 1000 տոլար ալ Բարիզի պանքան կը գնէ: Երբ Ալէքսանտրիա կը հասնի, այն տեղի գրադարանին մէջ առաջին անգամ «Հայրենիք»-ի մէջ իր մասին գրուածը կը կարգայ ու առանց մէկուն զգացնելու թերթը գրպանը դնելով կոչնչացնէ, իր մասին ու է կասկածի տեղի չի տալու համար:

— Մարտիլիայէն կը գրեն մեզ «Ամէն օր Մարտիլիա կը հասնին բազմաթիւ թշուառ պանդուխտներ գէպի Ամերիկայ գաղթելու համար: Բայց հոս կարգ մը «սմար» ըսուած մարդոց ձեռքէն անտանելի տառապանքներու կենթարկուին, բառին բուն նշանակութեամբ կը կողոպտուին: Վա՛յ մտիկ չընողներուն, գործ ունին եթէ Թուրքիա վերագառնան: Ատիկա փորձով հաստատուած է և Խաչատուր Թերզեան Պրանսայի կառավարութեան առջեւ դատ բացած է այս վատ արարքին համար: Ինթիճեան վարդապետն ալ, որուն քանի մը անգամ բողոքած է այս մասին, ջոջերէն բաժնուելի չուզեր և իր կողմէ վստահելի առաջնորդ մը չի կարգեր Մարտիլիոյ նաւահանգստին մէջ:

— Վառնայի Երկսեռ Որբախնամի վարչութիւնը մեզ ուզած նամակով մը իր շնորհակալութիւնը կը յայտնէ հետեւեալ նուիրատու ազգայիններուն:

Կոալուսի (Չուրցերիա) քարուզիչ գերմանացի Տօթթէօր Պուսէն 17 ֆրանք: Տ. Մեւքոն Տ. Մելքոնֆէն 1 ֆր. Շիրոր (Չուրցերիա) Ղազարոս Ղազարոսեանէն 13,70: Գրիգոր Արսլանճեան

նէն 2 ֆրանք: Աւետիս Էգնայեանէն 80 սանթիմ: Գալուստ Սաթճեանէն տօնախմբեան առթիւ 5 ֆրանք: Գումար 39,50 սանթիմ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Գ Ի Ա

Սուլթանը Գերմանական ընկերութեան մը շնորհեր է լուցկիի շինութեան մենաշնորհը: Ընկերութիւնը տարեկան 250,000 ոսկի պիտի վճարէ տէրութեան՝ ստացած մենաշնորհին փոխարէն:

— Մէլանիկի ֆրանսական հիւպատոսը Կ. Պոլսոյ գեսպանին տեղեկացուցած ըլլալով որ թղթակցութեանց ու գաղտնիքներու նոր բռնաբարումներ շարունակ տեղի կուենան թուրք պաշտօնեաներու կողմէ, գեսպանը որոշեց է մասնաւոր սուրհանդակները կըրկին հաստատել:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Բուռն վիճաբանութիւններէ ետքը որոնք յառաջ եկան նախկին նախագահ Իվանչովի և իր պաշտօնակիցներէն Թոնչէվի և ուրիշներու պաշտպանողականներէն, Սօպրանիէն որոշեց է գատի չենթարկել Նաչէվիչը, Պուլկարիոյ ամենէն յայտնի քաղաքական գէմբերէն մին, որ վաճառականութեան նախարարն էր, ինչպէս նաեւ Փէշէֆը, գատական նախկին նախարար և Վաչէֆը նախկին կրթական նախարար:

Թ Ո Ւ Ս Ւ Ա

Բեթերսպուրկէն կիմտցնեն թէ 300 ուսուսանողներ Բեթերսպուրկէն, Մոսկուէն, Քիէվէն, Օտեսաէն և Թիֆլիզէն յունիսի վերջը Բրակա պիտի երթան զօրավար Մասլովի, գնդապետ Բազուովի և պետական խորհրդոյ անդամ Փէթր Իվանովիչի հետ, ներկայ գտնուելու համար Պօհէմիոյ մայրաքաղաքին մէջ տեղի ունենալիք ազգային մեծ տօներուն:

— Բեթերսպուրկի քաղաքապետը յայտարարութեամբ մը ծանուցեց է քաղաքին բնակիչներուն թէ՛ մայրաքաղաքին և շրջակայ արուարձաններուն մէջ, դաշոյնով, ատրճանակով և նոյնիսկ պարզ գանակով պատիլ բացարձակապէս արգելուած է այն մարդոց համար, որոնց արհեստը ատոնց գործածութիւնը չի պահանջեր: Նմանապէս արգելուած է ծախել կամ կրել քար նետելու գործիքներ: Հակառակ վարմունք ցոյց տուողները 500 ռուպլի տուգանքի կամ երեք ամիս բանտարկութեան պիտի ենթարկուին:

— Սալատնիքով՝ Մոսկուա մեծահարուստ ուսու վաճառականներէն մին՝ մեռնելով իր բոլոր հարստութիւնը՝ 30 միլիոն ռուպլի չափ՝ կտակեր է դարձրած և բարեգործական հաստատութիւններու Մասնաւորապէս պահանջեր է որ աղջկանց Լիսէի և Մանչերու արհեստագիտական վարժարաններ բացուին այդ դրամով:

Թ Ո Ւ Մ Ա Ն Ի Ա

Ռուսիոյ ուսանողներ օգոստոս ամսուն մէջ, յունական կառավարութեան պատկանող նաւով մը Յունաստան ճամբորդութիւն մը պիտի ընեն: Հոն ժողով մը պիտի կազմուի, որուն պիտի մասնակցին երկու երկրին ուսանողները:

Կ Ր Է Տ Է

Եօրկիոս իշխանը կրետական խորհրդարանը բանալով իր ճառին մէջ թուեց է կատարուած գործերը և այն ստիպողական խնդիրները որոնք անյապազ կը սպասեն նոր խորհրդարանի որոշումներուն: Յետոյ ցաւ յայտնեց է իսլամներու գաղթումին համար և խնդրեց է երեսփոխաններէն որպէս զի խոյս տան ցոյցերէ: Միխիլտաքիս Քանտիոյ երեսփոխանը ամբողջ քրիստոնեայ երեսփոխաններու ստորագրութիւնը կրող առաջարկ մը ներկայացուցեց է, որ շնորհակալութիւն կը յայտնէ տէրութեան իրէտէն թուրքիներու մէջ ազատելուն համար, ու կը պահանջէ կղզոյն Յունաստանի կցումը և կը խնդրէ հիւպատոսներէն հաղորդել զայս իրենց կառավարութեանց:

Ասոր վրայ բազմաթիւ իսլամ երեսփոխաններ խօսք ուզեցին, բայց մերժուեցին և իրենց ձայնը խեղդուեց է ազմուկին մէջ: Նախագահը ստիպուեց է ժողովը փակել:

Իշխանը մեկնած պահուն՝ ներկաները սկսեցին անհաշիկ «կեցցէ՛ կցումը»: Իրիկուրը 5000 մարդիկ փողոցները շրջագայելով նոյն խօսքերը աղաղակեցին յունական դրօշակով իշխանին պալատը գիմելով:

Ի Տ Ա Լ Ի Ա

Չորս զրահաւորներ Տանտօլօ, Մօրօզիսի, Անարէա-Տօրիա, Աւրանիա, դէպի Թուրքիոյ ջուրերը ճամբայ ելելու են: Կը կարծուի թէ այս անակընկալ մեկնումը կապ ունի Փրէվէպայի միջազգային հետ և ուժ պիտի տայ իտալական կառավարութեան պահանջներուն, իտալացի մը թուրք իշխանութեանց կողմէ յանդիման ձերբակալուած ըլլալուն առթիւ:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ
Թրանսիլաի մէջ այս միջոցի սաստիկ ցուրտ կը ընէ, և սակայն պօքրներու ուժը չի պակասիր: Քարի մէջ պօքր խումբերը շաշոլութիւններ կուենան, Յազլու զինուորներ վերջերս անհնաւոր եղբր են 700 պօքրներ շոկատի մը, Տօթթէլուտի մօտ Պօէր գլխաւորներէն մին, Հիւրթըն՝ վերջերս, անգլիական համազգեստ հագած՝ Լօրէնձօ Մարքէզի գծին վրայ կառախումբ մը օդը հաներ է:

— Լօրտֆիչներ հետզհետէ դըռուարութիւններու կը բաղի զինուորները կառախումբով տեղափոխելու գործին մէջ: Բոլոր կարեւոր գիծերը աւրուած են Մեքենագործներն ու կառախումբին պետերը միայն ցերեկ տան կը բանին, այն ալ զինուորական ուժերու ընկերակցութեամբ, և կը յայտարարեն թէ՛ իրենց ծառայութեան ժամանակը լրանալուն պէս ժամ մը աւելի չի պիտի մնան երկրին մէջ:

— Մինչև այսօր Քարի մէջ 680 ժանտախտի դէպք պատահած է և 318 մահ:

— Անգլիացիք Բրէթօրիայի մօտ պօքրական փոքրիկ վաշտ մը գերի բռնեցին, որու մէջ կը գտնուի եղբր Ժուպէրի փեռան հրամանատար Աբրահամ Մալան:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Մանր միջազգայ մը տեղի ունեցիւ է յունիս 3ին, Պրանսական և անգլիական զօրքերուն միջև: Անգլիացի զինուորները որոնք ոստիկանութեան դեր կը կատարէին, ուզելով արգիլել Ֆրանսական զօրքերուն տան մը դուռը կտրել ներս մտնելին, քարերբրով ու սուլիներով յարձակում կրեցին անոնցմէ:

Անգլիական զօրքերը ինքզինքնին պաշտպանելու համար օդին մէջ պարպեցին հրացաններն և անոնց ազմուկէն գերմանացի զօրքերը եկան Ֆրանսական զօրքերուն ճղնելու: Իրենց թիւը 200ի հասաւ:

Վերջապէս անգլիացիք կրակ ըրին, Ֆրանսացի մը սպաննեցին և 5 գերմանացի ալ վիրաւորեցին, շորս անգլիացի և մէկ ճաբոնցի թեթեւօրէն վիրաւորուեցան: Իրման սպայ մը հասնելով վերջ տուաւ կռիւին:

— Բոլոր տէրութիւնները սկըսած են իրենց զօրքերը քաշել: Իտալացիք ալ իրենց զօրքերուն թիւը կէսի իջեցուցին, 9000 Ֆրանսացի և 3000 իտալացի 2ի-Լիէն մեկնեցան:

Отговорникъ:
Д-ръ МЖГЖРДИЧЪ ВАРГАНЪ